

**«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիր
Փոքր դրամաշնորհների հայտ**

<i>Ծրագրի անվանումը</i>	Պետպատվերի շրջանակներում տրամադրվող դեղերի ոլորտում առկա խնդիրներն ու գործընթացի կոռուպցիոն ռիսկերը
<i>Կոնտակտային անձ և կոնտակտային տվյալներ</i>	Բաբկեն Պիպոյան Հեռ.՝ +37499575577 Էլ.փոստի հասցե՝ pipoyanb@gmail.com
<i>Ծրագրի իրականացման վայրը</i>	Երևան
<i>Ծրագրի տևողությունը</i>	3 ամիս
<i>Ծրագրի հակիրճ նկարագրիրը</i>	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ուսումնասիրություն պետպատվերի շրջանակներում անվճար տրամադրվող դեղերի ոլորտում, պարզել՝ միննույն դեղամիջոցը որ երկրներից է ներկրվում, ինչ ընթացակարգերով է տրամադրվում քաղաքացիներին, ինչ է լինում այն խմբաքանակը, որը չի բաշխվում, ինչպես են պատկան մարմիններն արձագանքում հանրային դժգոհություններին և հանրայնացված պրոբլեմներին:
<i>Ծրագրի բյուջեն (նշել դրամով)</i>	1.090.000 ՀՀ դրամ

Դիմող կազմակերպության նկարագրություն

«Իրազեկ և պաշտպանված սպառող» ՀԿ-ն ձևավորվել է 2013 թ-ի հունիս ամսին: Զբաղվում է սպառողների շահերի և իրավունքների պաշտպանության խնդիրներով: Գործունեության ընթացքում ունեցել է ակտիվ համագործակցություն ինչպես տեղի հի-ների և զլմ-ների հետ, այնպես էլ քաղաքացիական ակտիվիստների: Գործունեության ընթացքում կամավորության սկզբունքով իրականացվել են ուսումնասիրություններ մի շարք ոլորտներում: Իրականացվել են ուսումնասիրություններ պարենային տարբեր ապրանքների ոլորտներում: Միշտ արձագանքել է հրապարակայնություն ստացած բոլոր խնդիրներին և օրենսդրական դաշտի սպասվելիք փոփոխություններին: Իրականացվել են տարաբնույթ ուսումնասիրություններ հանրային տարբեր ծառայությունների մատուցման ոլորտներում՝ բջջային կապ, գազ, էլեկտրաէներգիա, ջուր, ոչ պարենային ապրանքների ոլորտներում՝ դեղեր, լվացող և մաքրող միջոցներ, կոսմետիկա, ոսկյա զարդեր: Կազմակերպությունն իրականացրել է մեծածավալ ուսումնասիրություններ նաև հանրային տրանսպորտի և տաքսի ծառայությունների ոլորտներում: Կազմակերպության նախագահն ընդգրկվել և ակտիվ պայքարել է նաև քաղաքապետարանում ձևավորված հանրային տրանսպորտի հարցերով հանձնաժողովի աշխատանքներում: Պարբերաբար իրականացվել է մոնիթորինգ շուկայում՝ պայմանավորված տարբեր ապրանքների գնաճով: Իրականացվել է աուդիտ մանկապարտեզներին մատակարարվող սննդամթերքի պայմանագրերում:

2014-թ.-ի մարտից հունիս ամիսներին, Քաունթերփարթ ինթերնեյշնլ հայաստանյան ներկայացուցչի և USAID-ի ֆինանսավորմամբ իրականացրել է ծրագիր Երևան քաղաքում վաճառվող ապրանքի վերադարձի և փոխանակման խնդիրներով:

Ծրագրի նկարագրություն

Տարբեր զանգվածային լրատվության միջոցներով մշտապես բարձրաձայնվում է, որ հատկապես պետպատվերի շրջանականներում տրամադրվող դեղամիջոցների ոլորտը մտահոգիչ է: Հիվանդներին տրամադրվում են տարբեր պետություններում արտադրվող միևնույն դեղամիջոցը, ընդ որում, ըստ հիվանդների, վերջիններս ունենում են որակական տարբերություններ և էականորեն իրարից տարբերվող արդյունավետություն: Մի շարք հիվանդներ հրաժարվում են օգտագործել կամ ընդհանրապես վերցնել անվճար տրամադրվող դեղամիջոցները :Չնայած մի շարք օրենսդրական փոփոխություններին, խնդիրը շարունակում է մնալ արդիական: Ծրագրի նպատակն է բացահայտել պետպատվերի շրջանակներում տրամադրվող դեղերի ոլորտում առկա խնդիրներն ու կոռուպցիոն ռիսկերը, պարզել՝ որ երկրներից են ներկրվում դեղամիջոցները, ինչու է միևնույն դեղամիջոցը ներկրվում տարբեր երկրներից, ինչ է տեղի ունենում այն դեղամիջոցների հետ, որոնցից քաղաքացիները հրաժարվում են և ի վերջո քաղաքացուն չի տրամադրվում, ինչ տոկոսային տարբերություն կա չօգտագործվող այն դեղամիջոցների միջև, որոնցից մեկից քաղաքացին գոհ է, մյուսից՝ դժգոհ (Գրավոր հարցման և սոց. Հարցման միջոցով): Ծրագրով նախատեսվում է ուսումնասիրել գնումների գործընթացն ու դեղորայքի ձեռքբերման պայմանագրերը (փաստաթղթային վերլուծություն), իրականացնել ուսումնասիրությունն բուժհաստատություններից դեղորայք ստացող քաղաքացիների շրջանակներում (սոց. հարցում), իրականացնել համեմատական վերլուծություն ստացված և բաշխված խմբաքանակների միջև (փաստաթղթային վերլուծություն), իրականացնել պրոբլեմի վերաբերյալ հրապարակված նյութերի մոնիթորինգ և համապատասխանության գնահատում պատկան լիազոր մարմինների կողմից տրված մեկնանքանությունների մասով (ԶԼՄ-ների մոնիթորինգ և համեմատական փաստաթղթային վերլուծություն): Սոց. հարցումը նախատեսվում է իրականացնել քանակական հարցման մեթոդով՝ նախապես մշակված հարցաթերթի միջոցով, համապատասխանության գնահատումն իրականացվելու է փաստացի ձեռքբերված փաստաթղթերում առկա տեղեկատվության հարցման տվյալներից ելնելով: Ծրագրի ուղղակի շահառուներն են պետպատվերի շրջանականներում դեղորայք ստացող քաղաքացիները, անուղղակի շահառուները, բոլոր այն քաղաքացիները, որոնք պոտենցիալ կարող են օգտվել պետպատվերի շրջանակներում տրամադրվող դեղորայքից: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մշակել հայեցակարգ, ինչը հնարավորություն կտա նվազեցնել կոռուպցիոն ռիսկերն ու կարգավորել պրոբլեմն ի շահ քաղաքացու: Ակնկալվող արդյունքներն են խնդրի իրազեկման նպատակով մամուլի հրապարակումները, պրոբլեմի հանրայնացումը և հայեցակարգի մշակումը, հանրայնացումը առնվազն կունենա կաշկանդող ազդեցություն, իսկ ընդունումը կկարգավորի կնվազեցնի կոռուպցիոն ռիսկերը:

Ժամանակացույց

Շաբաթ	Գործողություն
1-ին	Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերի կնքում
2-րդ	Գրավոր հարցումների պատրաստում և առաքում
3-րդ	Հետազոտության հարցաթերթի մշակում, թրեյնինգ հարցազրուցավարների հետ
4-րդ	Ստացված տեղեկատվության փաստաթղթային ուսումնասիրություն, դաշտային աշխատանքների մեկնարկ
5-րդ	Դաշտային աշխատանքներ
6-րդ	Դաշտային աշխատանք
7-րդ	Դաշտային աշխատանք և ստացված արդյունքների նախնական վերլուծություն
8-րդ	Հետազոտության արդյունքների վերջնական վերլուծություն , մամուլի ասուլիսի կազմակերպում՝ հանրայնացում
9-րդ	Փաստաթղթային ուսումնասիրությունների և սոց. Հետազոտության արդյունքների համապատասխանության գնահատում
10-րդ	Փաստաթղթային ուսումնասիրությունների և սոց. Հետազոտության արդյունքների համապատասխանության գնահատում
11-րդ	Արդյունքների ամփոփում և հանրայնացում, Հայեցակարգի մշակում
12-րդ	Հայեցակարգի մշակում, կլոր սեղան շահագրգիռ կողմերի հետ՝ վերանայում, համալրում
13-րդ	Հայեցակարգի առաքում շահագրգիռ կողմերին, հանրայնացում՝ մամուլի ասուլիսի կազմակերպում, ծրագրի ամփոփում
	Ծրագրի իրականացման իրականացման ողջ ընթացքում կիրականացվի ՁԼՄ-ների մոնիթորինգ, կառանձնացվեն թեմային առնչվող նյութերը և կիրականացվի համապատասխանության գնահատում այդ պահին հավաքագրված տեղեկատվության հետ

Բյուջե

Միավոր	Միավորի համար	Միավորի գին	ՀԵԻԱ-ից պահանջվող գումար	Ներդրման գումար	Ընդհանուր
1.Ծրագրի ղեկավար՝ Սիրանուշ Զաքարյան	3	100.000	300.000	0	300.000
2.Հանրային կապերի պատասխանատու՝ Հայկ Մինասյան	3	80.000	240.000	0	240.000
3.Հաշվապահ՝ Վահե Բալայան	3	40.000	120.000	0	120.000
4.Դաշտային աշխատող՝ Վազգեն Զաքարյան	1	90.000	90.000	0	90.000
5.Սոցիոլոգ-փորձագետ՝ Բագրատ Հարությունյան	1	50.000	50.000	0	50.000
6.Վերլուծաբան-փորձագետ՝ Բաբկեն Պիպոյան	1	50.000	50.000	0	50.000
7. Ճանապարհաճախս (միայն տաքսի ծառայության վճար)	3	20.000	60.000	0	60.000
8. Գրասենյակային պարագաներ	3	10.000	30.000	0	30.000
9. Հրապարակումներ					
10. Գրասենյակի վարձակալում	3	50.000	0	150.000	150.000
11. Ընդհանուր ուղղակի ծախսեր			940.000	150.000	1.090.000
Ընդամենը			940.000	150.000	1.090.000